ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/297

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.10.2021թ. թիվ 26/26-1/17683-2021 գրությամբ Գագիկ Ավագյան Ա/Ձ-ին, Էդգար Մարկոսյան Ռաֆայելի Ա/Ձ-ին, Հայկ Կարապետյան Աբրահամի Ա/Ձ-ին, Խաչատուր Սամվելի Վարդանյան Ա/Ձ-ին և «Փոլար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի 20.10.2021թ. թիվ ԵԱՍՄ/395 գրության հիման վրա, 28.10.2021թ. թիվ 26/26-1/17683-2021 գրությամբ նախաձեռնել է Գագիկ Ավագյան Ա/Ձ-ին, Էդգար Մարկոսյան Ռաֆայելի Ա/Ձ-ին, Հայկ Կարապետյան Աբրահամի Ա/Ձ-ին, Խաչատուր Սամվելի Վարդանյան Ա/Ձ-ին և «Փոլար» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝

Մասնակիցներ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Մասնակիցների կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Մասնակիցների կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշումներ չեն ներկայացվել:

Մասնակիցները, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/297 ընթացակարգի շրջանակներում 03.11.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չեն ապահովել իրենց ներկայացուցիչների մասնակցությունը:

3. <u>«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.10.2021թ. թիվ ԵԱՍՄ/395 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «ԵԱՍՄ-ԳՀԾՁԲ-21/12» ծածկագրով բազմաբնակարան շենքերի աղբախցերի մաքրման ընթացակարգին մասնակցել են թվով քսաներկու մասնակից, ընթացակարգի արդյունքում ս. թ. սեպտեմբերի 15-ին Գագիկ Ավագյան Ա/Ձ-ի կողմից ստացվել է գրություն ընթացակարգի 1-ին, 7-րդ և 10-րդ չափաբաժիններին հետագա մասնակցությունից հրաժարվելու վերաբերյալ, սեպտեմբերի 22-ին էդգար Մարկոսյան Ռաֆայելի Ա/Ձ-ի և «ՓՈԼԱՐ» ՍՊԸ-ի կողմից ստացվել են գրություններ ընթացակարգին հետագա մասնակցությունից հրաժարվելու վերաբերյալ:

Հայկ Կարապետյան Աբրահամի Ա/Ձ-ի կողմից հայտի Հավելված 1-ը ներկայացվել է թերի՝ բացակայում էր հարկ վճարողի հաշվառման համարը: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում թերությունները չեն շտկվել:

Խաչատուր Սամվելի Վարդանյան Ա/Ձ-ն ճանաչվել էր ընտրված մասնակից 2-րդ չափաբաժնի մասով, որին սահմանված կարգով ծանուցվել է պայմանագրի նախագիծ, սակայն սահմանված ժամկետում ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը և ապահովումները չեն ներկայացվել:

Գագիկ Ավագյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը 1-ին, 7-րդ և 10-րդ չափաբաժինների մասով, Էդգար Մարկոսյան Ռաֆայելի Ա/Ձ-ի և «ՓՈ՝ԼԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը մերժվել են համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի գ) ենթակետի:

Հայկ Կարապետյան Աբրահամի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի:

Խաչատուր Սամվելի Վարդանյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտերը մերժվել է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետի:

Խնդրում եմ Ձեզ նախաձեռնել ընթացակարգ վերոհիշյալ ընկերություններին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կից կցվում է մասնակիցների կողմից ներկայացված գրությունների և «ԵԱՍՄ-ԳՀԾՁԲ-21/12» ծածկագրով ընթացակարգի արձանագրությունների պատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/297 ընթացակարգի շրջանակներում 03.11.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/297 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/297 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կողմից հայտարարվել է «ԵԱՍՄ-ԳՀԾՁԲ-21/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտեր են ներկայացրել Գագիկ Ավագյան Ա/Ձ-ն, Էդգար Մարկոսյան Ռաֆայելի Ա/Ձ-ն, Հայկ Կարապետյան Աբրահամի Ա/Ձ-ն, Խաչատուր Սամվելի Վարդանյան Ա/Ձ-ն և «Փոլար» ՍՊԸ-ն

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.09.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ սույն թվականի սեպտեմբերի 15-ին Գագիկ Ավագյան

Ա/Ձ-ի կողմից ստացվել է գրություն Ընթացակարգի 1-ին, 7-րդ և 10-րդ չափաբաժիններին հետագա մասնակցությունից հրաժարվելու վերաբերյալ, իսկ սեպտեմբերի 22-ին Էդգար Մարկոսյան Ռաֆայելի Ա/Ձ-ի և «ՓՈԼԱՐ» ՍՊԸ-ի կողմից ստացվել են գրություններ Ընթացակարգին հետագա մասնակցությունից հրաժարվելու վերաբերյալ:

Վերոգրյալով պայմանավորված՝ հանձնաժողովը որոշել է մերժել Գագիկ Ավագյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը 1-ին, 7-րդ և 10-րդ չափաբաժինների մասով, իսկ Էդգար Մարկոսյան Ռաֆայելի Ա/Ձ-ի և «ՓՈԼԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը ամբողջությամբ:

3. Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ Հայկ Կարապետյան Աբրահամի Ա/Ձ-ի կողմից հայտի Հավելված 1-ը ներկայացվել է թերի՝ բացակայում է հարկ վճարողի հաշվառման համարը, և համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի՝ նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով՝ մասնակցին առաջարկվելով սահմանված կարգով ներկայացնել շտկված փաստաթուղթը:

Այնուհետև նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ Հայկ Կարապետյան Աբրահամի Ա/Ձ-ի կողմից հայտի Հավելված 1-ը չի շտկվել:

Վերոգրյալով պայմանավորված՝ հանձնաժողովը որոշել է մերժել Հայկ Կարապետյան Աբրահամի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.09.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով հանձնաժողովը որոշել է ընտրված մասնակից ճանաչել Խաչատուր Վարդանյան Սամվելի Ա/Ձ-ին:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.10.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Խաչատուր Վարդանյան Սամվելի Ա/Ձ-ն ճանաչվել էր ընտրված մասնակից 2-րդ չափաբաժնի մասով, որին սահմանված կարգով ծանուցվել էր պայմանագրի նախագիծը, սակայն սահմանված ժամկետում ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը և ապահովումները չեն ներկայացվել:

Վերոգրյալով պայմանավորված՝ հանձնաժողովը որոշել է Խաչատուր Վարդանյան Սամվելի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը մերժել՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետի:

6. «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Մասնակիցների տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 20.10.2021թ.՝ թիվ ԵԱՍՄ/395 գրությամբ. գրությամբ ներկայացվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 և թիվ 2 նիստերի արձանագրությունները, «Փոլար» ՍՊԸ-ի, Գագիկ Ավագյան Ա/Ձ-ի և Էդգար Մարկոսյան Ռաֆայելի Ա/Ձ-ի գրությունները Ընթացակարգի հետագա մասնակցությունից հրաժարվելու վերաբերյալ, ինչպես նաև Մասնակիցների կողմից Ընթացակարգին ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը:

7. Խաչատուր Վարդանյան Սամվելի Ա/Ձ-ի մասով նախաձեռնված ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստը Պատվիրատուի կողմից չի ներկայացվել:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.10.2021թ. թիվ 26/26-1/17683-2021 գրությունը, «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի 20.10.2021թ. թիվ ԵԱՍՄ/395 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից

պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 9.3-րդ, 9.4-րդ և 9.5-րդ կետերի համաձայն՝

9.3 Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ընդ որում շինարարական աշխատանքների գնման դեպքում պայմանագրում ներառվում են ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված սարքերը և սարքավորումները:

9.4 **<u>Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:</u>**

9.5 **Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝** 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Այսպես, «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կողմից հայտարարվել է «ԵԱՍՄ-ԳՀԾՁԲ-21/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտեր են ներկայացրել Գագիկ Ավագյան Ա/Ձ-ն, Էդգար Մարկոսյան Ռաֆայելի Ա/Ձ-ն, Հայկ Կարապետյան Աբրահամի Ա/Ձ-ն, Խաչատուր Սամվելի Վարդանյան Ա/Ձ-ն և «Փոլար» ՍՊԸ-ն

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.09.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ սույն թվականի սեպտեմբերի 15-ին Գագիկ Ավագյան Ա/Ձ-ի կողմից ստացվել է գրություն Ընթացակարգի 1-ին, 7-րդ և 10-րդ չափաբաժիններին հետագա մասնակցությունից հրաժարվելու վերաբերյալ, իսկ սեպտեմբերի 22-ին Էդգար Մարկոսյան Ռաֆայելի Ա/Ձ-ի և «ՓՈԼԱՐ» ՍՊԸ-ի կողմից ստացվել են գրություններ Ընթացակարգին հետագա մասնակցությունից հրաժարվելու վերաբերյալ:

Վերոգրյալով պայմանավորված՝ հանձնաժողովը որոշել է մերժել Գագիկ Ավագյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը 1-ին, 7-րդ և 10-րդ չափաբաժինների մասով, իսկ Էդգար Մարկոսյան Ռաֆայելի Ա/Ձ-ի և «ՓՈԼԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը ամբողջությամբ:

Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ Հայկ Կարապետյան Աբրահամի Ա/Ձ-ի կողմից հայտի Հավելված 1-ը ներկայացվել է թերի՝ բացակայում է հարկ վճարողի հաշվառման համարը, և համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի՝ նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով՝ մասնակցին առաջարկվելով սահմանված կարգով ներկայացնել շտկված փաստաթուղթը:

Այնուհետև նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ Հայկ Կարապետյան Աբրահամի Ա/Ձ-ի կողմից հայտի Հավելված 1-ը չի շտկվել:

Վերոգրյալով պայմանավորված՝ հանձնաժողովը որոշել է մերժել Հայկ Կարապետյան Աբրահամի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը:

Այսպիսով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ***<u>10.09.2021թ.</u> նիստի թիվ 2 նիստի արձանագրության համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու հիմքով Հայկ Կարապետյան Աբրահամի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել, իսկ Գագիկ Ավագյան Ա/Ձ-ի, Էդգար Մարկոսյան Ռաֆայելի Ա/Ձ-ի և ՓՈԼԱՐ» ՍՊԸ-ի հայտերը գնահատվել են անբավարար և մերժվել՝ վերջիններիս կողմից <u>15.09.2021թ.-ին և 22.09.2021թ.-ին</u> ներկայացված Ընթացակարգին հետագա մասնակցությունից հրաժարվելու վերաբերյալ գրությունների հիման վրա:***

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Մասնակիցների տվյալները՝ համապատասխան փաստաթղթերով, <u>լիազորված մարմնին ներկայացրել է 20.10.2021թ.՝ թիվ ԵԱՍՄ/395 գրությամբ:</u>

Վերը շարադրված փաստերով պայմանավորված և հիմք ընդունելով «ԵԱՍՄ-ԳՀԾՁԲ-21/12» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.09.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությունը՝ Մասնակիցների հայտերը մերժելու վերաբերյալ, արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը (այդ թվում՝ մասնակցի տվյալները) լիազորված մարմին ներկայացնելու՝ Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետը:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և գործողությունների ժամանակին իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում՝ Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ, որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայումս գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Վերոգրյալ իրավական նորմերի մեկնաբանության և սույն գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթը՝ այն է հինգ աշխատանքային օր ժամկետը: Ընդ որում՝ օրենսդրությունը չի նախատեսում նշված ժամկետը վերականգնելու ինստիտուտ, հետևաբար, տվյալ դեպքում հինգ աշխատանքային օր ժամկետի խախտման հանգամանքները չեն դիտարկվում:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել Գագիկ Ավագյան Ա/Ձ-ին, Էդգար Մարկոսյան Ռաֆայելի Ա/Ձ-ին, Հայկ Կարապետյան Աբրահամի Ա/Ձ-ին և «Փոլար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Անդրադառնալով Խաչատուր Սամվելի Վարդանյան Ա/Ձ-ի մասով նախաձեռնված ընթացակարգին, ապա հարկ եմ համարում ընդգծել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.10.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Խաչատուր Վարդանյան Սամվելի Ա/Ձ-ն ճանաչվել էր ընտրված մասնակից 2-րդ չափաբաժնի մասով, որին սահմանված կարգով ծանուցվել էր պայմանագրի նախագիծը, սակայն սահմանված ժամկետում ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը և ապահովումները չեն ներկայացվել:

Վերոգրյալով պայմանավորված՝ հանձնաժողովը որոշել է Խաչատուր Վարդանյան Սամվելի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը մերժել՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետի:

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, 20.10.2021թ. թիվ ԵԱՍՄ/395 գրությամբ լիազորված մարմին է ներկայացրել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 և թիվ 2 նիստերի արձանագրությունները, «Փոլար» ՍՊԸ-ի, Գագիկ Ավագյան Ա/Ձ-ի և Էդգար Մարկոսյան Ռաֆայելի Ա/Ձ-ի գրությունները Ընթացակարգի հետագա մասնակցությունից հրաժարվելու վերաբերյալ, ինչպես նաև Մասնակիցների կողմից Ընթացակարգին ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը:

Միևնույն ժամանակ Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.10.2021թ. թիվ ԵԱՍՄ/395 գրությամբ հայտնել է, որ **«Խաչատուր Սամվելի Վարդանյան Ա/Ձ-ն ճանաչվել էր ընտրված մասնակից 2-րդ չափաբաժնի մասով, որին սահմանված կարգով ծանուցվել է պայմանագրի նախագիծ, սակայն սահմանված ժամկետում ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը և ապահովումները չեն ներկայացվել:**

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը, որով կապացուցվեր պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը Ընթացակարգի քարտուղարի կողմից «Խաչատուր Սամվելի Վարդանյան Ա/Ձ-ին ուղարկած լինելը, **Պատվիրատուի կողմից չի ներկայացվել:**

Մինչդեռ Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Խաչատուր Սամվելի Վարդանյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով պետք է ներկայացներ վերջինիս տվյալները՝ **համապատասխան հիմքերով**: Տվյալ դեպքում որպես հիմք հանդիսանում է «Խաչատուր Սամվելի Վարդանյան Ա/Ձ-ին՝ Կարգի և Ընթացակարգի հրավերի համապատասխան պայմանագիր կնքելու առաջարկի և կնքվելիք պայմանագրի նախագծի վերաբերյալ պատշաճ ծանուցված լինելը, քանի որ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերջինիս կողմից պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո է միայն հոսում 10 աշխատանքային օր ժամկետը, ինչը և չպահպանելու դեպքում «Խաչատուր Սամվելի Վարդանյան Ա/Ձ-ն զրկվում է պայմանագիր ստորագրելու իրավունքից, որից հետո ի հայտ է գալիս Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջը:

Նշվածի արդյունքում արձանագրում եմ, որ սույն ընթացակարգի նախաձեռնման նպատակով Պատվիրատուի կողմից «Խաչատուր Սամվելի Վարդանյան Ա/Ձ-ին պայմանագիր կնքելու առաջարկի և կնքվելիք պայմանագրի նախագծի վերաբերյալ պատշաճ ծանուցած լինելու փաստը չներկայացնելու հետևանքով վիճելի է մնացել դրա գոյության փաստը:

Վերոգրյալի արդյունքում գտնում եմ, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի բացակայության պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Խաչատուր Սամվելի

Վարդանյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.10.2021թ. թիվ 26/26-1/17683-2021 գրությամբ Գագիկ Ավագյան Ա/Ձ-ին, Էդգար Մարկոսյան Ռաֆայելի Ա/Ձ-ին, Հայկ Կարապետյան Աբրահամի Ա/Ձ-ին, Խաչատուր Սամվելի Վարդանյան Ա/Ձ-ին և «Փոլար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**